

ԵՊԻՄԿՈՂՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ (Մեպրեմբեր 30, 2001 թ.)

1700-ամյակի եզրափակիչ հանդիսություններն իրենց լրումին հասան սեպտեմբերի 30-ին՝ Վարագա Սուրբ Խաչի փոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ-ի կապարված եպիսկոպոսական ձեռնադրությամբ: Հայ Առաքելական Եկեղեցու չորս նվիրյալ սպասավորներ՝ Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն վարդապետ Աղամյանը, Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը, հայրավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մովսես վարդապետ Մովսիսյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս վարդապետ Ներսիսյանը, կոչվեցին «ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Սուրբ Պարարագին ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Ճեմարանի սաներ և մեր Եկեղեցու բարեպաշտ հայորդիք:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու առաքելական կանոնների, ձեռնադրության նախորդ օրը կապարվեց երդման արարողակարգը, համաձայն որի ընծայացուները, «ի ծուկս ... առաջի եկեալ» Իջման Ս. Սեղանի առջև, բարձրաձայն ընթերցեցին եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած երդմնագիրը՝ հանուն Ամենասուրբ Երրորդության: Մերժելով բոլոր հերետիկոսներին և հերձվածներին՝ ձեռնադրյալները կրկին անգամ վերանորոգեցին իրենց սրբազան ուխտը Աստուծո առջև՝ մինչև կյանքի վախճանը հնազանդ մնալ Առաքելափմն Եկեղեցու կանոններին՝ «ի ներքոյ իշխանութեան եւ հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս»: Արարողությունն ավարտվեց ընծայացուների և ուխտադրության վկաների ձեռնադրությամբ:

Հաջորդ օրը, Միածնաէջ Տաճարի քաղցրալուր զանգերի դողանքի ներքո, Վեհաբանից հոգևորականաց հրաշագարդ թափորը Վեհափառ հայրապետի և ընծայացու վարդապետների հետ առաջնորդվեց Մայր Տաճար:

«Հրաշափառ Աստուած» ոգեշունչ շարականի հնչյունների ներքո շքեղազարդ թափորը մուտք գործեց Տաճար, որպես Իջման Ս. Սեղանի առջև կապարվեց հրապարակային խոստովանություն: Այնուհետև պարարագիչ Վեհափառ հայրապետը, «Հովի քաջ» շարականի երգեցողությամբ, բարձրացավ Ս. Սրբեփաննոսի Խորան, խնկարկեց եկեղեցում հավաքված հավաքավոր ժողովրդին և բազմեց հայրապետական գահին՝ ունկնդիր լինելու Մայր Աթոռի միաբանության և «համօրէն ուխարի» վկայություններին: Այնուհետև Վեհափառ հայրապետին սկսեցին ըստ կարգի մուտենալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական աստիճանների ծառայասեր և նվիրյալ ներկայացուցիչները՝ դոնապանները, ջախընկալները, կիսասարկավագները, սարկավագները, քահանաները, եպիսկոպոսները և հասարակության ունևոր (իշխանք) և չքավոր (աղքատք) շերտերը խորհրդանշական կերպով

ներկայացնող գույգ աշխարհականները, հավասարելով ընծայացուների հոգևոր և իմացական պարբաստվածությունը:

Այս ամենից հետո խարավիլակ, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Ադան Սրբազանի առաջնորդությամբ, ընծայացուները ծնրադիր, աստվածաբան աստիճան մտնեցան Հայրապետին: Վեհափառ Հայրապետի կարարած հավաքո՞ւ հրապարակային քննությունից հետո, սաղմոսերգությամբ ձեռնադրյալներին առաջինը շնորհվեցին եպիսկոպոսական զգեստի մաս կազմող շքեղ նմիփորոնները:

Այնուհետև շարականների երգեցողությամբ, իր հետ եղող առնթրականների՝ Տ. Հովնան և Տ. Նաթան Սրբազանների ուղեկցությամբ Նորին Սրբությունը Ս. Սյունիանոսի Խորանից ուղղվեց դեպի Ավագ Ս. Խորանը՝ կարարելու ձեռնադրության ծեսի ամենախորհրդավոր մասը՝ օծումը:

«Զի ողորմած եւ մարդասէր ես» մաղթանքից հետո ընծայացուները ծնկաչոք մտնեցան «առ ոյս Սրբազնագոյն Հայրապետի», և Նազին Սուրբ Օծությունը, դնելով իր աջը յուրաքանչյուրի գլխին, սկսեց ընթերցել «Տէր Աստուած մեր» աղոթքը: Ապա նվիրյալները, դալրաց դասի «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեւորոգ շարականի ու սաղմոսերգությունների հնչյունների ներքո, «զձեռն վեր առեալ», դարձան դեպի արևմուտք՝ խորհրդանշելով իրենց հեռացումը «երկրային կյանքի հաճույքներից»: Եվ ահա դպիրներից կազմված թափոթով հանդիսավորապես Ավագ Ս. Խորան բերվեց Մյուռնոնով լի Ադամին: Ազգիս Հայրապետը Հայոց Սրբալոյս Մյուռնոնով օրհնեց և օծեց նվիրյալ եկեղեցականների ճակատներն ու աջ ձեռքի բութ մատները: Այս երկրորդ օծումն արդեն եպիսկոպոս հայրերի կյանքում ևս մեկ անգամ նորոգեց, ամրացրեց ու հաստատեց իրենց անդրժեյի դաշինքը Աստծո հետ՝ ժողովրդի առաջ ևս մեկ անգամ հավասարելով իրենց պարբաստական նպատակաուղղվածությունը՝ ծառայելու Հայաստանյայց Եկեղեցուն և հայ ազգին:

«Օծումն, գոր հեղեր...» գեղեցիկ աղոթքից հետո Նորին Սրբությունը, իբրև եպիսկոպոսական բարձր տիպոսի խորհրդանիշ, ընծայացուներին շնորհեց գավազան և մատանի, նաև Ս. Ավետարանը հանձնեց նրանց՝ որպես Աստծո Ամենագոր խոսքի նվիրյալ քարոզիչների:

Ձեռնադրության արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ եպիսկոպոսներին ու հավաքացյալ հայորդիներին ուղղված օրհնության խոսքով և մաղթանքով, որում Նորին Սրբությունը մի անդրադարձ կարարելով 1700-ամյակի սեպտեմբերյան արարողություններին՝ ասաց. «Ահա այս րոնահաբություններից ծնված օրհներգությունը այսօր շարունակում է հնչել մեր շուրթերին ձեռնադրության այս ուրախ առիթով: Մենք վերադին Աստված ենք փառաբանում, Աստված ենք օրհներգում, որ այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համար Միաձուսեչ Իջնան Սուրբ Սեդակի առջև ձեռնադրում ենք չորս եպիսկոպոսներ, չորս եպիսկոպոսներ այն թեմերի համար, որոնք անաստվածության ծանր տարիներին դժվարին լուծը կրեցին: Այսօր, սակայն, բազում աշխատանքների հրամա-

յականն է ծառացած մեր Եկեղեցու առջև, մեր առաջնորդների առջև, որպեսզի խորհրդային ժամանակներին հաջորդող այս նոր շրջանում օր առաջ վերականգնենք եկեղեցիները և վերանորոգենք քրիստոնեական հավաքը հավաքավոր մեր զավակաց հոգիներում:

Չորս եպիսկոպոսներից առաջինը՝ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, ծնված Հայաստանում, Ոսկեհար գյուղում, միջնակարգ կրթությունից հետո ուսանած Էջմիածնի Հոգևոր Ծեմարանում, այնուհետև երջանկահիշարակ Վազգեն Ա Ամենայն հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել է որպես հովիվ Սանկր Պեդերբուրգի հայ համայնքի և շարունակել իր ուսումը Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սանկր Պեդերբուրգի Հոգևոր ասպիրանտուրայում: Եզրաս արքեպիսկոպոսը հովվական իր գործունեության շրջանին իր ծառայասիրությանը վայելեց իրեն վարսահաված հոգի սերն ու հարգանքը, և ամիսներ առաջ Մենք, գնահատելով իր վաստակը, նրան վարսահեցիկ Մոսկվայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական պաշտոնը: Եվ այսօր թեմական խորհրդի միջնորդությանը ուրախությանը ձեռնադրում ենք նրան եպիսկոպոս առաջնորդական կոյն Աթոռի վրա:

Երկրորդը՝ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն վարդապետն է: Նույնպես ծնունդ Հայաստանի, ուսանել է Էջմիածնի Հոգևոր Ծեմարանում, այնուհետև երկար տարիներ որպես հովիվ պաշտոնավարել Բուլղարիայում՝ միշտ արժանանալով գնահատանքին իր առաջնորդի և Վազգեն Ա Ամենայն հայոց հայրապետի: Վերադառնալով Բուլղարիայից, Հոգեշնորհ հայր Սուրբը նշանակվեց ծառայության Գեղարքունիաց թեմում, իսկ այնուհետև սրանձնեց պաշտոնը Արմավիրի թեմակալ առաջնորդի:

Երրորդը անձը Միքայել Ժ. վրդ. Աջապահյանն է՝ ծնած Հայաստան, ուսումը սրացած Հոգևոր Ծեմարանում Էջմիածնի: Երջանկահիշարակ Գարեգին Ա Վեհափառ հայրապետի րևոթիներում ուսանեց Հոռմում, այնուհետև սրանձնեց պարասխանարվությունը Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի և Մեր կողմից առաջնորդական պաշտոնի լծվեց Շիրակի թեմում: Այսօր Մենք, ընդառնելով թեմական խորհրդի միջնորդությանը, նրան ևս սիրով օժեցիկ և ձեռնադրեցիկ եպիսկոպոս Շիրակի թեմի առաջնորդական Աթոռի վրա:

Ռուսաստանի թեմի առաջնորդ Մովսես հայր Սուրբը կոյնայն Հայաստանի ծնունդ է, ծնվել է Գառնիում, ուսանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ծեմարանում, այնուհետև իր ուսումը շարունակել Զագորսկի Հոգևոր Ակադեմիայում, ապա Մոսկվայում երկար տարիներ հոգևոր հովիվ ծառայելուց հետո, պաշտոնի լծվեց հայրավային Ռուսաստանում որպես առաջնորդ:

Այս չորս եպիսկոպոսներին այսօր օրհներգությունը վերադին մեր շուրթերին մենք օժեցիկ և ձեռնադրեցիկ, հավաքով, որ նրանք պիտի կարողանան նվիրումով, սիրով և իմաստությամբ որպես քաջ և նշմարիտ հո-

վիվներ առաջնորդել իրենց վարահիված թեմերը, պիտի կարողանան առաջնորդել իրենց վարահիված ժողովրդին Քրիստոսի Սուրբ Ավետարանի պարսկերանների և պարզամտների ճանապարհով: Պիտի կարողանան հավաքել ամրակայել մեր ժողովրդի հոգիներից ներս, որպեսզի մեր ժողովրդի զավակունք զորացած հավաքով շարունակեն քրիստոնեական իրենց կյանքը՝ հավատարիմ իրենց սրբազան հայրերի ավանդներին:

Ս. Պարարագի ավարպից հեղո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեղանադրանը Կոնստանդնուպոլսի ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին հանձնեց պանակներ:

Թող Բարձրյալ Տերն Իր ամենասպեղծ Աջի հովանու ներքո պահի և պահպանի նվիրյալ սպասավորներին, որպեսզի իրենց բարձր առաքելության մեջ անբրբուն առաջնորդեն հայ ժողովրդին Քրիստոսավանդ սրբազան հավաքի մեջ՝ «ի փառս Աստուծոյ եւ ի պանծացումն Հայոց Եկեղեցւոյ»:

ՎԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ